ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

ք. Երևան **«28» օգոստոսի 2026 թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2026 թվականի օգոստոսի 25-ի № 2-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 9:00-ին և ավարտվել՝ ժամը 17:00-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյանը - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար,

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյանը - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ,

Ա. Ավետյանը - Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ,

Օ. Աբրահամյանը - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ,

Վ. Սիրունյանը	- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ,
Ա. Բաղդասարյանը	- «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ,
Բ. Փափազյանը	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ,
Ա. Բախշյանը	- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական,
Ա. Հակոբյանը	- «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (համաձայնեցված է) 2026 թվականի պետական բյուջեով 1213 «Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ» միջոցառումից 12,000,000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ վերաբաշխելուն /նվազեցնելուն/ և Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելուն հավանություն տալու մասին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վաղարշակ Մատիկյանին վերանշանակելուն հավանություն տալու մասին:

Օրակարգային հարցերի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ա. Ավետյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Օ. Աբրահամյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Վ. Սիրունյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
6. Ա. Բաղդասարյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Բ. Փափազյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,

8. Ա. Բախշյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
9. Ա. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,

Քվեարկության արդյունքները՝
Օրակարգի առաջին և երկրորդ հարցերի վերաբերյալ՝ 9 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 9 անդամներից 9-ը օրակարգի հարցերին քվեարկել են «կողմ»:

Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (համաձայնեցված է) 2026 թվականի պետական բյուջեով 1213 «Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ» միջոցառումից 12,000,000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ վերաբաշխելուն /նվազեցնելուն/ և Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելուն:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վաղարշակ Մատիկյանին վերանշանակելուն:

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Խորհրդի նախագահ՝ _____ **Ժ. Անդրեասյան**
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**
ստորագրություն